

## ԽՐԱՏՆԵՐ ԽՈԼԵՐԱՅԻ ՄԱՍԻՆ<sup>1)</sup>

### I

ՄԻԶՈՑՆԵՐ, ՈՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ է ՉԵՌՆԱՐԿԵԼ ՄԻՉՉԵՒ  
ԽՈԼԵՐԱՅԻ ԵՐԵՒԱՆ

1. Ամեն մի բնակիչ պարտաւոր է, հէնց իւր օգտի համար, նպաստել աղաքի առողջապահական գործին, մաքուր պահելով իւր տռներ, բակը, գոմը և սրահը.

2. Ազգը և ուրիշ ամեն տեսակ անմաքրութիւնները պէտք է հաւաքել առանձին արկդների մէջ և քաղաքից գուրս տանել, իսկ աւելի անվտանգութեան համար պէտք է նախապէս նրանց վրա չը հանդցրած կիր ածել և անպէս տանել.

3. Արտաքնոցները պէտք է մաքուր և իստակ պահեն, և ամեն օր աճնաեղ պէտք է ածել աղտահանիչ (քըզփեռկպրցուցի) նիւթեր.

4. Կեղասու ջրերի, աղբակիր և ամեն տեսակ անմաքրութիւնների համար շնուած փոսերը պէտք է մաքուր և իստակ պահել, իսկ նրանց մէջ հաւաքած ազգը պէտք է քաղաքից դուրս տանել կանխապէս զեղերով նրանց անվտանգ դարձնելով.

Ծանօթութիւն, նրբ քաղաքում արդէն հիւանդութիւն կաէ, կամ թէ շատ մօտիկ է քաղաքին, ան ժամանակ աւելի լաւ է լցած փոսերը չը մաքրել, այլ նրանց մէջ ածել անվտանգ դարձնող նիւթեր, ծածկել կրով և ամուր փակել:

5. Քաղաքի ներքին մասերում և գետի ափերում եղած հորերը պէտք է փակեն, չամենաան դէպա նրանց ջուրը չի կարելի ոչ մի կերպ գործա-

1) Ակս խրատները Թիֆլիզի քաղաքագլուխի չանձնարարութիւնով կազմել է պարոն բժշկապետ Վ. Մ. Արժրունին, Քաղաքավին Վարչութիւնը իւր լունիսի 20-ի նիստում վամբացրել է և որոշել է հրատարակել նրանց ռուսերէն, հակերէն, վրացերէն և թուրքերէն լեզուներով, ընդամենը 25,000 օրինակ. ալժմ ալդ «խրատներն» սպառւած են.

ծեւ լւացքի, գետին ջրելու, մանաւանդ խմնլու համար Նողնպէս պէտք է փակւեն և ան հորերը, որոնք փորւած են արտաքնոցների և աղրի փոմերի մօտ:

6. Եթէ հիւանդութիւն եղած տեղում աղբիւրակին ջուր չը կալ, այն ժամանակ հորի կամ գետի ջուրը ուրիշ կերպ չի կարելի գործածել, եթէ ոչ անպատճառ եռացրած:

7. Մանօթութիւն. Միշտ պէտք է զգուշ լինել և կեղոստ առուների մօտից ջուր չը վերցնել:

7. Չորսհինգ օր շարունակ պէտք է շատ զգուշ լարաբերութիւն ունենալ վարակւած տեղերից եկողների հետ:

## II

## ՄԻԶՈՑՆԵՐ, ՈՐ ՊԵՏՔ Է ԶԵՌՆԱՐԿԵԼ ԽՈԼԵՐԱՒ ԺԱՄԱՆԱԿ

Հինց որ քաղաքում երևաց խոլերակին առաջին դէպքը, բոլոր վերել լիշտած միջոցները պէտք է գործադրւեն ամելի մեծ խստութեամբ:

Ամեն մարդ պէտք է հոգալ, որ խոլերակից ազատվի, Այս պատճառով անհրաժեշտ է առանձին ուշադրութիւն դարձնել.

ա) ԲՆԱԿԱՐԱՆԻ Վ.ՐԱ,

բ) ԽՈՀԱՆՈՑԻ, ՍԵՂԱՆԱՏԱՆ ԵՒ ԹԵՅԻ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ Վ.ՐԱ,

գ) ՈՒՏԵԼԻՒՔԻ ԵՒ ԽՄԵԼԻՒՔԻ Վ.ՐԱ,

դ) ԱՊՐԵԼՈՒ ԵՂԱՆԱԿԻ Վ.ՐԱ.

## Ա. Բ Ն Ա Կ Ա Ր Ա Ն

8. Հարկաւոր է, որքան կարելի է, շուտ շուտ բնակարանների օդը փոխել, եթէ մինչև անգամ նա ընդարձակ է և մեծ լուսամուտներ ունի:

9. Որովհետև չորսութիւնը ոչնչացնում է խոլերակին, հարկաւոր է զգուշ լինել բակը ջրելուց, սենեակների լատակը լւանալուց և սենեակում թաց շորեր պահելուց, որոնք լացելուց լատու պէտք է լաւ չորացվին, և ակ լատակը մաքրել միախ չոր շորով:

## Բ. ԽՈՀԱՆՈՑԻ, ՍԵՂԱՆԱՏԱՆ ԵՒ ԹԵՅԻ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ

10. Խոհանոցի մաքրութեան և լատակութեան վրա պէտք է առանձին ուշադրութիւն դարձնել, կաթսաները, բանացնելուց առաջ, պէտք է եռացող ջրում լւանալ, նոխնպէս և տարելիները, բաժակները, դանակները, պատառաքաղները և գգալները, իսկ անտեղ, ուր կարելի է, պէտք է չորացնել դուխովով վառարանում:

11. Անձեռոցիկները, տփողները և թէլի անօթի սրբիչները պէտք է միշտ պահարանում պահել չորացած և աղնակղից հանել միայն գործածելու ժամանակը:

12. Սեղանատան և թէլի ճերմակեղէնը կարելի է լանձնել լւանալու համար միայն ան լւացարարին, որ նրան չի խառնիլ խոլերալով հրանդների կեզուու ճերմակեղէնի հետ. աւելի լաւ է առհասարակ տանը լւանալ բոլոր ճերմակեղէնները:

#### Գ. ՈՒՏՑԵԼԻՔ ԵՒ ԸՄՊԵԼԻՔ

13. Խոլերալի ժուր և կաթ կարելի է խմել միայն եռացած. Հանքավին ջրեր կարելի է խմել և առանց եռացնելու ինչ որ վերաբերում է արևատական ջրերին, պէտք է զնել լաւ գործարաններում կարելի է գործածել զելտէրեան ջուր, խոլս տալով սողալին ջրից. լիմոնադը օդտակար է:

14. Գինի խորհուրդ են տալիս խմել կարմիրը, այն էլ անալիսին, որ խոլերան երեալուց առաջ է շիշերի մէջ ածւած. Սովորած մարդը գարեջուր կարող է խմել քիչ քանակութեամբ միայն անալիսին, որ շատ լաւ խմորւած և պարզւած է, իսկ կւաս պէտք չէ խմել նորինակս և պաղպակ (մորոժենուե) չ'ուտել:

15. Խորհուրդ են տալիս խմել թէկ, կոփէ կոնեակով, օղիով և առանց սրանց. Օգտակար են նորնակէս քիչ քանակութեամբ ուօմ, շամազանեաւ. Լաւ է գործածել գրոդ և զլինաւէն:

16. Կերակուրը պէտք է դիւրամարս լինի, որպէս զի նա ստամոքսին չը խանգարի. Պէտք է ուտել քիչ-քիչ և շոտ-շոտ. Կերակը համար գործածւած բոլոր բաները պէտք է լաւ նիւած և խորովւած լինին. Անհրաժեշտ է զգուշանալ հում բանձարեղէն և կանանչեղէն, սալաթ, վարչնդ և ապին ուտելուց:

17. Հում պտուղներ կարելի է ուտել միայն մաքուր ջրի մէջ լւանալուց իւտու, իսկ աւելի լաւ է լւանալ սալիցիլի, լիմոնի կամ զինչքարի թթւածնի (լիննեկամեննապես կիսլոտա) բազաղրութեան մէջ, (Մի թէլի զդալը խառնելով մի շիշ ջրի հետ):

Մանօթութիւն, Անտեղը, ուր հնար չը կաէ ալս նախազգուշութիւնները գործ դնել, աւելի լաւ է պտուղներ բոլորովին չուտել. մանաւանդ չը պիտի ուտել թութ, ծիրան (կուրազա) և սիխ:

18. Պէտք է զգուշ լինել նորնակս և չաղ (չաղ միս, դմակ և ապին) և սառն (բոտվինի, ակրոշկա, վինեգրեա) կերակուրներն ուտելուց, նորնակս և անալիսի բաներից, որ ծարաւ են զրգուում (երշիկ, խողի միս, աղին ձուկն, աղի պանիր): Հայը պէտք է շատ լաւ. թիսած լինիւ:

19. Նախաճաշիկը, օրինակ՝ պանիրը, իւղը, ապովոտը և ազն, պէտք է պահել ծածկոցի տակ կամ մաքուր անձեռոցիկի մէջ փաթաթած, որպէս էանձերը նրանց վրա ախտ չը բերն. Խորհուրդ են տալիս հացը, ուղի ճանձերը նրանց վրա ախտ չը բերն. Պահանջի մէջ կամ օջաղի կրակի կամ սպիրովով կանթեղի բոցի վրա պահել կամ ամելի լաւ է երեսի կեղեց հանել (քերթել) և միջուկը ուտել.

#### Դ. ԱՊՐԵԼՈՒ ԵՂԱՆԱԿԸ

20. Ըստհամուր կանոնն այս է, որ չը պիտի կեանքի սովորական եղանակը փոխել խոլերավի ժամանակ, եթէ նա կանոնաւոր է եղել. Սական անհրաժեշտ է զգուշ լինել մրսերուց, խոլս տալ խոնաւութիւնից, նոյնպէս և այս բոլոր բաներից, որոնք կարող են լոգնեցնել և թուլացնել մարդուն, որոնք են՝ երկար ժամանակ արթուն մնալը, ուժից վեր ֆիզիքապէս և մտաւորապէս աշխատելը և ուրիշ ամեն տեսակ չափազանց աշխատութիւններ.

21. Մանաւանդ պէտք է զգուշ լինել հարբեցութիւնից, որովհետեւ ոգելից ընտելքների ի չարը գործ դնելը մարդուն տրամադրում է խոլերավի հիւանդանալուն, Ծերեմը և զառամենաները պէտք է առհասարակ անելի զգուշ լինեն.

22. Մարմինը պէտք է մաքուր պահել, շաբաթական 2—3 անգամ տաք բաղանիք ընդունել, Գետում լաւ է չը լողանալ Ամարավին ժամանակ պէտք է հագնել թեթև հագուստ, խոկ երեկոները աւելի տաք, Խորհուրդ են տալիս Փլանելի փորկապ հագնել.

23. Լուսացարարը չը պիտի ընդունի լուսանալու հիւանդների ախափսի ձերմակեղէնները, որոնք չեն ախտահանելի առ պէտք է միաւն ախափսիները ընդունի, որոնք դրած են եղել ապաքս ասած կ րիստալլիչ ես կ ա չ ա կ ա ր բ ո լ ո վ ա չ ա կ ի ս լ ո ա մ ա ս ա ծ 100 մ. ջրի մէջ—ոչ պակաս քան 24 ժամ. Լուսացարարը չը պիտի մոռանալ որ հիւանդների ձերմակալինը, մանաւանդ թաց ձերմակեղէնը խոլերավին ախտի գլխաւոր տարածողներից մէկն է և հէնց ակս պատճառով ամենից շատ լուսացարարներն են մնանուալ.

24. Խորհարաբները, երբ սկսում են կերակուր պատրաստել սպասաւորները սեղան ծածկելու ժամանակ պէտք է իրանց ձեռները լուսանան սապոնով և խողանակով (չհետկա) կամ ներքենում վշտած ախտահան խառնուրդներից մէկով, իսկ ամենից լաւն է կարբութան թթուածնի 3 մասի և 100 մաս ջրի խառնուրդով.

25. Պէտք է մարդկանց մեծ բազմութիւններից խոլս տալ՝ տօնավաճառներից, ուխտատեղիններից և ալլն.

26. Եթէ մի տան մէջ խոլերավին հիւանդ կամ, պէտք է նրան ծա-

ռաբէ մի ժարդ, ուրիշները կարող են հիւանդին ալցել միակն կարճ ժամանակով, որպինեան թէկուզ շուտ շուտ բայց կարճ ժամանակով հիւանդին մօտ մնալը, ինչպէս երեսում է, անվտանգ է, Խոլերավին հիւանդներին ալցելողները պէտք է լետու լուանան իրանց ձեռներն ու երեսը և ախտահաննեն, ասինքն՝ անվտանգ դարձնեն կարողնեան թթւածնի 3 մ. և 100 մ. ջրի խառնուրդով, նորիշէս և բերանները ողողել աղավին թթւածինով (աղեանական կիսալուսա), վերջինից ածելով 10—15 կաթիլ մի բաժակ ջրի մէջ,

27. Լաւ է միշտ տանը ունենալ հետեւել միջոցները. Բոտկինի և Խնողեմցովի կաթիլներ, էֆիր, նաշատիրնի ապիրտ, Վալերիանովակիա և Գորմանսկավիա կաթիլներ, ընդ սմին նրանց գործածելու ժամանակի և եղանակի մասին Խորհուրդ հարցնել բժշկից կամ դեղաբանում. Աական ոչ մի դէպում չը պիտի ալս միջոցների վրա լուս դնել և պէտք է նրանց գործածել միայն մինչև բժշկի գալը. Բոլոր միւս անդական միջոցներից և արտոնադրուած դեղերից անպալման պէտք է խոլս տալ.

28. Խոլերավին հիւանդների արտաթորութիւնները և փախանքը պէտք է զգուշութեամբ ախտահաննել անվտանգ դարձնել և փսու ածել արտաքնոց, բայց երբէք բակը կամ փողոց չը թափին.

29. Խոլերավից մեռածի դիակը պէտք է փաթաթել սաւանի մէջ, որ թրջւած է կարբուսան թթւածնի (կարբուլովակեա կիսրոտավի—5 մասը 100 մաս ջրի հետ) կամ սովեմակի (2 մասը 1000 մաս ջրի հետ) խառնուրդի մէջ և անմիջապէս փակ դադարով թաղել.

30. Խնակարանը, կահ-կարասին, և առ հասարակ բոլոր իրեղնները պէտք է բժշկի խորհրդով խիստ դեղինքնեկցիակի ենթարկւեն. Խնչ վերաբերում է հիւանդի հազարին, ճերմակնեղէնին, սաւանին, ամի՞ լաւ է ալրել, իսկ եթէ, որ և է պատճառով, այդ անկարելի է, դնել նրանց կարբուսան թթւածնի թունդ խառնուրդի մէջ (5 մասը 100 մաս ջրի հետ) մի ամբողջ օր:

## Ե. ԱԹԱՀԱՆՈՂ ՄԻԶՈՑՆԵՐ ԵՒ ՆԲԱՆՑ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆԸ

ա. Առ և և մա վերցնել 1 մաս 1000 մաս ջրի համար (մօտաւորապէս 16 գրան սովեման մի շիշ ջրի համար) և աւելացնել 40 մաս աղավին թթւածին (աղեանական կիսլուսա).

Շանօթութիւն. Ակս միջոցը հասարակութեան ձեռքը չէ արւում, որովհետեւ սովեման չափազանց զօրեղ թուն է.

բ. Կալբունան թթւածին 2-ից մինչև 5 մաս վերցնել 100 մաս ջրի համար:

գ. Պղնձաւին կուպորոս (մեղնի կուպորոս) վերցնել 1-ից մինչև 3 մասը 100 մաս ջրի համար և երկաթեակ կուպորոս (ժելեզնի կուպորոս) 10 մասը 100 մաս ջրի համար.

գ. Զըսանգրած կիր (Նեղաշեննալա իդվեստ),

ե. Խուլերաւին կիր (Խորինսովալա իդվեստ),

զ. Կրի ջուր (Խորեստկովու մոլոկո) չը հանդցրած կրի 20 մասը վերցնել և խառնել 100 մաս ջրի հետ. միշտ պէտք է թարմ պատրաստածը ունենալ,

է. Արտաքնոցն և ը դեղինֆեկցիա անելու (անվտանգ դարձնելու) համար ամեն օր ախտեղ ածել պղնձավին կուպորոսի (2 մասը 100 լու) համար սուլամակի 2 մաս ջրի մէջ և երկաթալին կուպորոսի (մելեզնի կուպորոսի 1 մասը 8 մաս ջրի մէջ) խառնուրդ, թունդ կարբոլեան (5 մաս 100 մաս ջրի համար) կամ սուլամակի (1 մաս 1000 մաս ջրի համար խառնուրդի և 40 մաս աղալին թթւածնի հետ). Եթէ աղքի փոսերը լիքն են, անհրաժեշտ է ծածկել աղքը չը հանդցրած կրի հաստ ծալքով, նախապէս ածելով ակնտեղ վերակիշեալ ախտահանող խառնուրդներից մէկը:

ը. Հիւանդների արտաթորութիւնները և փսխանքը անվարակիչ դարձնելու. համար կարելի է գործածել նոյն ախտահանող միջոցները նոյն չափով, որչափ է արտաթորութիւնը կամ փախանքը. Այս նպատակի համար գործադրում է նոյնպէս ծծմբավն կամ աղալին թթւածին.

ա. Հիւանդի արտաթորութիւննը կամ փսխանքը կից կամ կան-կարասից մաքրելու համար գործադրում են սուլամակի 2 մասը 100 մաս ջրի հետ.

մ. Հիւանդների և մոռածների անկողինը, ճերմակեղն ը և հագուստը անվարակիչ դարձնելու համար պէտք է այս առարկաները մի ամրող օր թողնել կարբոլեան թթւածնի 5 մաս 100 մաս ջրի կամ սուլամակի 2 մաս 1000 մաս ջրի թթւածնի մէջ.

ի. Խոկ բնակարանը և տունը ախտահանելու համար պէտք է դիմել բժիշկին:

